	հետազոտական և վերլուծական աշխատանքներ	5,000,000	
	Խորհրդատվական ծառայության ծախսեր	3,000,000	
	լուսաբանման, հանրության հետ կապված ծախսեր	9,950,000	
	նյութերի պատրաստման, քարզմանության, տպագրման հետ կապված ծախսեր	5,000,000	



20.15/11 ✓

	նյութերի պատրաստման, քարզմանության, տպագրման հետ կապված ծախսեր	5,000,000	
	սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ	4,000,000	
	3. Տաքսի բանկարանի ստեղծման աշխատանքներ	119,950,000	2010-2013
	խորհրդատվական ծառայության ծախսեր	11,950,000	
	լուսաբանման, հանրության հետ կապված ծախսեր	19,000,000	
	ներքին հարցարանների ծախսեր	54,000,000	
	սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ	19,000,000	
	նյութերի պատրաստման, քարզմանության, տպագրման հետ կապված ծախսեր	16,000,000	
	4. Հնչյունաշարի հարավային շրջաններում էկոլոգաաշրջափոխության գարգացում	59,250,000	2010-2013
	հետազոտական և վերլուծական աշխատանքներ	9,250,000	
	լուսաբանում, մոնիտորինգի հետ կապված ծախսեր	5,000,000	
	հետիոտն, հեծանվային ճանապարհների պատրաստում, բարեկարգում, ցուցանակների տեղադրում	39,000,000	
	սեմինարներ, միջոցառումների կազմակերպման հետ կապված աշխատանքներ	6,000,000	
	5. Տաքսի վերածնունդ՝ ծրագրի ավարտի միջոցառումներ (տեղական ինքնակառավարչություն և հանցանակությունների հավաքագրում)	1,614,623,500	2010-2017
	2010 թ. Տաքսի ավարտի միջոցառման ծախսեր	415,623,500	
	2011թ-ից 2017թ-ը Տաքսի ավարտի միջոցառման ծախսեր	1,199,000,000	
	միջոցառումների կազմակերպման վճար	227,000,000	
	տեխնիկայի ապահովման, տեղափոխման հետ կապված ծախսեր	153,000,000	
	համերգային մասի կազմակերպման ծախսեր	280,000,000	
	ֆուրշետների, կազմակերպման ծախսեր	157,000,000	
	նյութերի պատրաստման, քարզմանության, տպագրման հետ կապված ծախսեր	195,000,000	
	տարածքների, սարքառումների վարձակալության և այլ ծախսեր	187,000,000	
	ԸՑագումներ	4,985,493,000	
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման, գույքի վարձակալության, ապրանքների առուվաճառքի պայմանագրերի շրջանակներում Տաքսի վանական համալիրի վերականգնման, ինչպես նաև Տաքսի վանքի և Տաքսի վանքի հարակից բնակավայրերի մշակութային զարգացման համար ձեռք բերվող ապրանքներ.	

20.15/1

	ծառայություններ և աշխատանքներ – 659,000,000 դրամ «Սոբիտիյե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հետ պայմանագիրը Տաքսի ավարտի միջոցառման հետ կապված՝ 268,930,615 ՀՀ դրամ (745,952 ԱՄՆ դոլարին համարժեք),	
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	997,000,000 դրամ - գրասենյակային ծախսերը (գրասենյակային, վարձակալություն, կոնունալ, փոստ, հեռահաղորդակցություն, տպագրական, հիմնական միջոցների վերանորոգման, սպասարկման), աշխատակիցների աշխատավարձը և գործուղման հետ կապված, խորհրդատվական ծախսեր տարեկան հաշվետվությունների հրապարակման և աուդիտի, խորհրդատվության ծախսերը և այն բոլոր ծախսերը որոնք ուղղված չեն բարեգործություն ստացողներին
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ մշակույթի նախարարություն, Սյունիքի մարզպետարան, Տաքսի գյուղական համայնքներ
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի ազգային մրցունակություն հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվությունների տեսքով, ՀՀ մշակույթի նախարարություն՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով

20.15/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Ս 770
բաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Ս-644-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼԲԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-1/7934-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N 03/07.2/10640-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2153-10 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 01/08/2817-10 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» ծրագրի մասին» N Ս 644-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետը լրացնել «Արագածոտնի մարզի Աշնակ և Կաթնաղբյուր գյուղերի համակարգչային սրահներ, Փարպի և Ծաղկահովիտ գյուղերի նախակրթարաններ» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անսխալաբար կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գզալի նշանակություն:

1) «Գյուղտնտեսիմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09804825) 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N SH-AN 009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է


Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի համակարգչային սրահի վերանորոգում՝ 1991389 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Գյուղտնտեսիմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09804825) 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N SH-AN 010 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղի համակարգչային սրահի վերանորոգում՝ 1934181 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Գյուղտնտեսիմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09804825) 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N SH-AN 007 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի մարզի Փարպի գյուղի նախակրթարանի վերանորոգում՝ 4965844 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Գյուղտնտեսիմոնտաժ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09804825) 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N SH-AN 008 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի նախակրթարանի վերանորոգում՝ 7680964 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ 769-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-645-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՑՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱՎԵՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-1/7933-10, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական էկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2152-10, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 03-ԱԱ08/1778, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 01/15/2532-10 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 01/10.1-1/2922-10 եզրակացությունները, **ա թ ա շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում» ծրագրի մասին» N Մ 645-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 5-րդ կետը լրացնել «Գեղարքունիքի մարզի Անտառամեջ և Կալավան գյուղեր, Տավուշի մարզի Վերին Կարմիր աղբյուր գյուղ» բառերով:


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

1) «ԻՇԿ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07608294) 2010 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված՝ N SH-TV008 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի Վերին

Կարմիր աղբյուր գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցում՝ 3759228 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Արշաեղ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856074) 2010 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված՝ N 18-10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Անտառամեջ և Կալավան գյուղերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցում՝ 1244200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական էկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի ու Տավուշի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁԱՏՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- 768 -Ա
քաղ. երևան

«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 3/3.8-2/30304-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N ԱԱ/ՄարտՄխ-2/4709-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի N ԱԱ/3-6/2213-10 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Բեյրութից անհատ բարերարներ Շարբել Թոհմենի և Վալիդ Մեսահմայինի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (99 տեղ, 2339.5 կգ ընդհանուր քաշով, 18331 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4850 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 15-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Երիտասարդության զարգացման կենտրոնի ստեղծում Գյումրի քաղաքում» ծրագրի մասին» N Մ-556-Ա և 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-904-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇՆՄԱՆ ՑՈՒՑԱԿ
(Բեռ Բեյրութից)

15/1632

Ստացող կազմակերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ, փախտ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
Տիրամայր Հայաստանի Երիտասարդական զարգացման կենտրոն (մոտ 50 շահառու) 15 սեպտեմբեր 2006թ. No Մ - 556 - Ա	5	1արկղ(1հատ)	Չուկ պատրաստելու սեղան MTF 140	739	739
		1արկղ(4հատ)	Ֆիլտր	-	-
		1արկղ(1հատ)	Շգմիչ քամիչ	311	311
		1արկղ(1հատ)	Մսի հարիչ	2715	2715
		1արկղ(40հատ)	Փայտյա աթոռ	1000	25
Տիրամայր Հայաստանի կենտրոն-Գյումրի (մոտ 80 շահառու) 25 դեկտ. 2009թ. No Մ - 904 - Ա	87		Մսաղացի ցանց	18	18
		1արկղ(1հատ)	Նմոր հունցիչ	976	976
		1արկղ(1հատ)	Amara միկրովառարան	539	539
		1արկղ(1հատ)	Չժանգոտվող պողպատից սեղան	716	716
		1արկղ(1հատ)	Աշխատանքային սեղան ծորակով	2090	2090
		1արկղ(1հատ)	Robot- coupe-միքսեր	584	584
		1արկղ(1հատ)	Silko զազօջախ 4 ալյուրով	4212	4212
		1արկղ(1հատ)	Silko զազօջախ 6 ալյուրով	5680	5680
		1արկղ(2հատ)	Աման ղվալու պլաստիկ դաշակ	106	53
		8արկղ(8հատ)	Թիկնաթոռ	1400	175
		2արկղ(2հատ)	Մեղան	100	50
		70արկղ(70հատ)	Պրաստիկ աթոռ փափուկ տակդիրով	770	11
		1արկղ(1հատ)	Հեռուստացույց	817	817
		1արկղ(1հատ)	Հեռուստացույցի տակդիր	122	122
		1արկղ(107հատ)	Խոհանոցի պարագաներ	1600	14.95
4արկղ(400հատ)	Ապակե բլուրակներ	400	1		
2փախտ(32 արկղ)	Աման ղվալու հեղուկներ և ղվալու	946	29.6		

Այս բեռի ընդհանուր քաշն է 2,339.5 կգ (երկու հազար երեք հարյուր երեսուցուհինգ կգ, հինգ հարյուր գրամ), \$25,841.00 (քսանհինգ հազար ութ հարյուր քառասունմեկ ԱՄՆ դոլար) արժողությամբ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ **767**Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-644-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-1/7943-10, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N 03/07.2/10641-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2154-10 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 01/4251-10 եզրակացությունները, որոշում է.

1. Մահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2009-2013 թվականներին իրականացվող՝ «Օգնություն դպրոցներին և մանկապարտեզներին» ծրագրի մասին» N Մ-644-Ա (2009 թվականի հոկտեմբերի 6-ի N Մ-692-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մշո երկիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06001634) 2010 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N 24/09/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Շիրակի մարզի Քարաբերդ գյուղի դպրոցի պատուհանների փոխարինում՝ 991800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Մույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- **766**
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N Մ-192-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Մի. Օ. Է. Էֆ. մանուկների բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/7855-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/2026-10 գրությունները, որոնք ներկայումս է.

1. Սահմանել, որ «Մի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի մարտի 28-ի «Մի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների համապարփակ տնտեսական զարգացում» ծրագրի մասին N Մ-192-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

քաղաքացի Ֆելիքս Ղարաբաղյանի հետ (անձնագիր սերիա AH 0377601, տրված 15.05.2007, 040-ից) 2010 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 205.6 քմ տարածքի վարձակալում մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ամսական 1394444 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-765-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-904-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/7754-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/2018-10 գրությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05502622) 2010 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված՝ N OLA 11/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպությանը պատկանող շենքի տանիքի վերանորոգում՝ 15495191 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ


Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 764-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-166-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի 2010 թվականի հոկտեմբերի 6-ի N 010/065 գրությունը, որն ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N 3)» N Մ-166-Ա որոշմանը կից բաշխման ցանկում «Պրոֆ. Լ. Հ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ» բառերը փոխարինել «Ճամբարակ ԱԿ» ՓԲԸ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 763-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N Մ-577-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ») (N 2)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-1/7944-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2156-10 եզրակացությունները, որոնք ներկայումս գտնվում են:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2009» ծրագրի մասին» N Մ-577-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «2009թ. դեկտեմբերի 23-ը» բառերը փոխարինել «2010 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:

2. Մահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

«Տիգրան Մեծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2010 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված՝ N Մ-23/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 600 քարոզչական պատրաստների պատրաստում և տարեկան հաշվետվության տպագրում՝ 303000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Ր

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 762 Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N Մ-577-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական
հիմնադրամ) (N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/7867-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/2024-10 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2009» ծրագրի մասին» N Մ-577-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «2009թ. դեկտեմբերի 23-ը» բառերը փոխարինել «2010 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

«Մեծ մատիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02567143) 2010 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված՝ N Ծ-22/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 600 սեղանի տնակ-օրացույցի պատրաստում՝ 960000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՂՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
20 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 761-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՂՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-397-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N 3/3.8-1/7935-10 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2155-10 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Կապան քաղաքի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի մասնաշենքի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-397-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝


- 1) որոշման 1-ին և ծրագրի 5-րդ կետերում «131060300 դրամ» բառերը փոխարինել «210840300 դրամ» բառերով.
- 2) որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում և ծրագրի 9-րդ կետի 1-ին պարբերությունում «129050300 դրամ» բառերը փոխարինել «206400300 դրամ» բառերով.
- 3) որոշման 2-րդ կետի «բ» ենթակետում և ծրագրի 9-րդ կետի 2-րդ պարբերությունում «720000 դրամ» բառերը փոխարինել «1180000 դրամ» բառերով.
- 4) որոշման 2-րդ կետի «գ» ենթակետում և ծրագրի 9-րդ կետի 3-րդ պարբերությունում «1290000 դրամ» բառերը փոխարինել «2060000 դրամ» բառերով:

2. Մահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված

պայմանագրով նախատեսված գործարքն անիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորաշեն» ՆՏԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01203702) 2010 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված N ՀՀ/Ն-09/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակում՝ 1200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի ՈՄ - 760 Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԵԼԻ 30-Ի N Մ-264-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/7755-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N ԹՂ/5787-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/2017-10 եզրակացությունները օրոշում է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձանգեզուր» սրտաբանական կենտրոնի կառուցում, 2-րդ փուլ» ծրագրի մասին» N Մ-264-Ա որոշման 1-ին կետում և կից ծրագրի 5-րդ կետում «122270000 դրամ» բառերը փոխարինել «135410000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ ապյն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նորաշեն» ՆՏԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01203702) 2010 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված N ՀՀ/Ն-10/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 1280000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Ամարասշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01238582) 2010 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված N ՀՀ-ԳՀ/Կ-1/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոն տանող 1.1 կմ երկաթուղյան ավտոճանապարհի վերանորոգում՝ 11860000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- **759** -ա
քաղ. Երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-
ՏՈՍԻ 17-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-
ԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՉԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱ-
ԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/7857-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2149-10 եզրակացությունները, որոնք ներկայումս գտնվում է:

1. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արարատի մարզի Փոքր Վեդու համայնքի մշակույթի տան վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ (Կոտայքի մարզ, քաղ. Եղվարդ, ՀՎՀՀ՝ 02560685) 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների մատակարարում՝ 4284000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- 758 -ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-
ՏՈՍԻ 20-Ի N Մ-533-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-
ԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՁԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱ-
ԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/7856-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱԱ/3-4/2150-10 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 20-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի N 1 մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-533-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ (Կոտայքի մարզ, քաղ. Եղվարդ, ՀՎՀՀ՝ 02560685) 2010 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում շինարարական ապրանքների մատակարարում՝ 1448040 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- 757-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱ-
ԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» ԲԱՐԵՓՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 3/3.8-2/8016-10 ու Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010
թվականի հոկտեմբերի 21-ի N ԱԱ/3-4/2180 -10 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև
նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2007 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Զեյթուն ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի
մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Յուզլիֆտ» ԴՄՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝
N 01/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերելակի տեխնիկական
սպասարկման և ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ամսեկան
35000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 756 Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N Մ-637-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական
հիմնադրամ)»

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 3/3.8-1/7758-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/2019 եզրակացությունները, որոնք ներկայումս

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի դպրոցի նախագծում» N Մ-637-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՀ նախագծերի պետական արտագերառուեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2010 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 66 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արագածոտնի մարզի Մելիք գյուղի դպրոցի աշխատանքային նախագծի փորձաքննություն՝ 150000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԶ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- 755Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-
ՏՈՍԻ 20-Ի N Մ-533-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 3/3.8-2/8017-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/2125-10 եզրակացությունները, **ո ր ո շ** 2 ու մ է.

1. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռքբերված սառնարանն ու գազօջախը (2 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 5200 ԱՄԷ դիրհամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, Արարատյան ՏՄ), ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 20-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-533-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն և Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՔՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- 754 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՔՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 2)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 22-ի N 3/3.8-2/30663-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/2129-10 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Մահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված շինարարական ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

- 1) «ՍՕՄԱ Կոսմետիկ» ընկերությունից՝ 1400 կգ ընդհանուր քաշով, 3180 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, տեղափոխման ծախսերը կազմում են 450 ԱՄՆ-ի դոլար.
- 2) «ՀԻԼԱԼ Ալյումինիում» ընկերությունից՝ 326 կգ ընդհանուր քաշով, 6996.15 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, տեղափոխման ծախսերը կազմում են 100 ԱՄՆ-ի դոլար.
- 3) «Դեստոնինկ» ընկերությունից՝ 7684.25 կգ ընդհանուր քաշով, 18930.35 եվրո արժողությամբ, տեղափոխման ծախսերը կազմում են 1797.60 եվրո:

Բեռների մաքսային ձևակերպումները կատարվելու են «Արարատյան» տարածաշրջանային մաքսատանը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-753
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱԾ) (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 3/3.8-2/7988-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/2132-10 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված շինարարական ապրանքները (864 տեղ, 19480 կգ ընդհանուր քաշով, 9434.88 եվրո ընդհանուր արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 1500 եվրո, Արարատյան ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-752-ա
քաղ. Երևան


**«ԲԱՐԻ ՆՊԱՏԱԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 21-ի N 3.8-2/7989-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 20-ի N ՖԲ/ՄարտՄխ-1/4650-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 19-ի N ԱԱ/3-6/2135-10 եզրակացությունները, ք թ 2 ա մ է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Ֆրանսիայի «Հայ մարտիկների օժանդակ մարմին» բարեգործական կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Բարի նպատակ» բարեգործական միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի (625 տեղ, 11361 կգ ընդհանուր քաշով, 94645.60 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7100 ԱՄՆ-ի դոլար, «Արարայան» տարածաշրջանային մարաստուն, բեռի բաշխման ցանկը կցվում է) ներմուծման և անհատուց բաշխման ծրագիրը:

2. «Բարի նպատակ» բարեգործական միություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումը ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով հերկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն հրավերով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համակարգման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ

ԲԱՇԽԱՄԱՆ ՑԱՆԿ

Հ/Հ	Շահառուների անվանումը	Սարքանցի անվանումը	Տեղերի քանակը	Սարքանցի անակ	Չափման միավոր	Բրուտ ստո	Գումարի չափը ԱՄՆ դոլար
1	2	3	4	5	6	7	8
1	1 «ԲԱՐԻ ՆՊԱՏԱԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	Օգտ. Հագուտ	278	5623	կգ	5915	32451
			278			5015	32451
2	2 «ԼՊՊԱՆԻ ԱԳԱՏԱՆԱՄԱՐՈՒՆԻՆԵՐԻ միություն» Մարտունու տարածքային միավորում	Օգտ. Հագուտ Կոշիկ կանացի Կանացի բլուզներ Քաթիլակա գուլպաներ	13 30 10 5	258 600 420 1040	կգ գույգ հատ գույգ	277 394 147 78	1516 6000 3839 600
			58			896	11955
3	3 «Ուտիցի կանայք» հասարակական կազմակերպություն	Օգտ. Հագուտ Կոշիկ կանացի Կանացի բլուզներ Քաթիլակա գուլպաներ Դպրոցական սեղաններ Հաշմանդանի սայլակներ Հաշմանդանի մետաղյա հեծակներ 1հատ	22 35 11 5 27 4 1	437 700 468 1011 340 4 2	կգ գույգ հատ գույգ կգ հատ կգ	468 460 162 78 341 57 2	2565 7000 4281 583 350 100 7
			105			1568	14886

15/16.2


✓

15/10.2

Ա. Արմենյան

[Handwritten signature]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ



1	Օգտ. կարգատ	10	200	213	1183
2	Կոչի կանցի	19	380	250	3800
3	Կանցի բուգներ	10	452	146	4134
4	Բաժնակա գույքներ	3	600	48	347
5	Կարգատ	3	52	72	100
6	Չեղի օժան	2	41	44	80
7	Կարգատ	2	19	22	120
8	Փչի ու թղթի թերթիկ կտրույալ	3	31	100	310
9	Օգտի օժան 2 հատ	1	11	13	50
		53		908	10124
		625,0		11361,0	94645,6

9 «Բարի սատակ» բարեգործական միություն հասարակական կազմակերպության կողմից նվիրված 50 մտանցիներ

✓

15/10.2

1	Օգտ. կարգատ	5	99	106	582
2	Կոչի կանցի	10	200	131	2000
3	Կանցի բուգներ	4	170	59	1556
4	Բաժնակա գույքներ	2	415	30	239
5	Կարգատ	4	4	58	100
6	Կարգատի թերթիկներ	4	4	5	13
		27		389	4490
		25		399	5178
1	Օգտ. կարգատ	4	80	85	464
2	Կոչի կանցի	3	60	40	600
3	Կանցի բուգներ	2	80	30	733
4	Բաժնակա գույքներ	2	415	32	240
		11		187	2037
		54		860	10672
1	Օգտ. կարգատ	13	258	277	1516
2	Կոչի կանցի	25	471	328	4710
3	Կանցի բուգներ	10	420	147	3839
4	Բաժնակա գույքներ	5	1000	78	571
5	Չեղի օժան	1	28	30	30
		54		860	10672
		54		860	10672

4 «Կին և մտանցի» սոցիալական կազմակերպություն հասարակական բարեգործական կազմակերպություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ- **751** -Ա
քաղ. երևան

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒ
ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/6894-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱՄ3-6/1711-10 եզրակացությունները, որոնք նշում է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Լևոն Հայրապետյանի կողմից Արաբական եմիրություններից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության հասցեով ուղարկված պողպատե հիմնակմախիկային տան (1 տեղ, 18500 կգ ընդհանուր քաշով, 20000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 3000 ԱՄՆ-ի դոլար, Սյունիքի ՏՄ) ներմուծման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին հանձնման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վանքի համայնքին՝ Վանք համայնք ժամանող հովանավորների և հյուրերի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-750
քաղ. Երևան

«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱՐԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԳԻ ԴԻՄԻՏՐՈՎ
ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԳԱՐՏՆԵՐԻ ԴՈՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱՍՈՒՑՆԵՐԻ ՓՈՆՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N 3/3.8-1/7908-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 3775-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 10-ի N ԱԱ/3-4/2148 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Արտնցի 15, բն.20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 2998750 դրամ արժողությամբ «Արարատի մարզի Դիմիտրով գյուղի մանկապարտեզի դռների և պատուհանների փոխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2010 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլատե դռների և պատուհանների պատրաստում ու տեղադրում՝ 2998750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի կառավարման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



Հաստատված է
«Կամրջակ» ՄԲՀ-ի
Տնօրենի կողմից
«10 հոկտեմբեր 2010 թ.»


Արարատի մարզ Դիմիտրով գյուղի մանկապարտեզի դռների և պատուհանների փոխման Ծրագիր

1	Ծրագրի նպատակը	Արարատի մարզ Դիմիտրով գյուղի մանկապարտեզի դռներ և լուսամուտների փոխման և մանկապարտեզի շահագործումը հնարավոր է դարձնում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3	Բարեգործը	«Փենյանքեր Նարեն Հելփս Արմենիա» ՀԿ Pijacker NAREN HELPEN ARMENIA հասցե: Hoefslag 1 -2641ZZ Pijnacker նախագահ ՀԵՆԲ ԲՈՍ:
